



Մայիսի 28-ին՝ Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման տոնին նվիրված հանրապետական մաղթանք կայացավ Վիրահայոց թեմի Սամցխե -Ջավախքի, Բաթումի եկեղեցիներում: Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում Վիրահայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ կատարվեց տոնական հանրապետական մաղթանք, որին ներկա էին եկեղեցու հոգևոր դասը, առաջնորդարանի և «Հայարտուն» կենտրոնի աշխատակիցներ,

վիրահայոց համայնքային ներկայացուցիչներ, ծնողներ, հավատացյալներ:
Հանրապետական մաղթանքի արարողությանը ներկա էր Վրաստանում ՀՀ դեսպանության խորհրդական Լևոն Թորգոմյանը:

Հանդիսավոր արարողության ավարտին Թեմակալ առաջնորդն իր շնորհավորական խոսքն ուղղեց ներկաներին, ընգծելով, որ գեղեցիկ այս տոնը առանձնապես սրտամոտ է վիրահայությանը, քանզի Հայաստանի Հանրապետության Հռչակագիրը ստորագրվել է քաղաքամայր Թբիլիսիում:

Սրբազան Հայրը ոգեկոչելով Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ջավախք աշխարհի Սաթխայի հերոսամարտերը, զոհված ազատամարտիկների հիշատակը՝

<

Հանրապետության
հռչակումն անվանեց
մեր
Ժողովրդի
ազատ
ու

անկախ
ապրելու

կամքի դրսևորում, որն իրականացավ դարավոր պայքարով և հազարավորների արյան
զնով:

Թեմակալ Առաջնորդը իր մաղթանքում աղոթք բարձրացրեց առ Աստված Հայաստանի
Հանրապետության, Արցախի, աշխարհասփյուռ հայության բարեկեցության, խաղաղության
պահպանման, հայ-վրացական բարեկամության խորացման աղերսով: